ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 մարտի 2026թ. թիվ 153-Ա

Ն.ԴԱՎԻԹԱՎՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 29-րդ հոդվածի 7-րդ մասի և 111-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Նաիրա Կոմիտասի Դավիթավյանին 2026 թվականի մարտի 9-ից ազատել «Արևածագի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից և լուծել նրա հետ 2018 թվականի մարտի 7-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «Արևածագի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածով սահմանված կարգով Նաիրա Դավիթավյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետին՝

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4.3-րդ մասով սահմանված կարգով սույն որոշումը ստորագրվելուց հետո եռօրյա ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով կամ առձեռն ծանուցել հասցեատիրոջը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

X

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա.ՂԱՐԻԲՅԱՆ

2026թ. մարտի 4
ք.Վանաձոր